Ազգ
Azg
armenian daily
25 ՅՈՒՆՈՒԱՐ 2002 ՈՒՐԲԱԹ 14 (2459)

# Արաֆաթն Իրաքից պաշտպանություն է խնդրում

ՌԱՄԱԼԼԱ, 24 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Պաղեստինի առաջնորդ Յասեր Արաֆաթը կոչ է արել Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնին միջոցներ ձեռնարկել Իսրայելի պաղեստինյան ժողովրդի դեմ ագրեսիան կանխարգելելու նպատակով: Այս մասին հաղորդել է INA գործակալությունը: Չորեքշաբթի Արաֆաթը նամակ է հղել Իրաքի նախագահին, ուր խնդրել է նրան «միջամտել՝ կանխարգելելու համար բարբարոսությունը եւ արյունոտ սիոնիստական ագրեսիան ընդդեմ պաղեստինյան ժողովրդի»: Համաձայն «Ռոյթեր» գործակալության, մեկուկես տարի առաջ, տառացիորեն պաղեստինա-իսրայելական հակամարտության ամենասկզբում, Հուսեյնն արդեն խոստացել էր միջամտել եւ «վերջ դնել սիոնիզմին»:

ՀԵՌԱԽՈՍ

# 360 րոպեն անվճար, իսկ դրանից հետո՝ 1 րոպեն 4 դրամ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսպիսի արդյունքի տվեցին «Արմենտելի» եւ Հայաստանի կառավարության առավել քան 60-օրյա բանակցությունները: Ստորագրված համաձայնագիրը երեկ հաստատվեց ՀՀ կառավարության նիստում: Կառավարության կողմից ստորագրած ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը նիստին հաջորդած ճեպազրույցի ժամանակ մանրամասնեց ձեռք բերված պայմանավորվածությունները:

Նախարարը հիշեցրեց, որ «Արմենտելն» իրավունք ուներ, ըստ նրան տրամադրված թիվ 60 լիցենզիայի, րոպեավճար մտցնել 1999 թ. հունվարի 1-ից՝ 8 դրամ 1 րոպեի համար: Անվճար խոսակցության համար ընկերությունը սահմանել էր ամսական 120 րոպե: Այժմ, ինչպես արդեն նշվեց, 120 րոպեից անվճար խոսակցության ժամանակահատվածը դարձել է 360 րոպե թվային հեռախոսակայանների համար՝ 900 դրամ բաժանորդավճարով: Րոպեավճարը նախատեսվող 8 դրամից իջել է 4 դրամի: Այս կարգը կսկսի գործել արդեն փետրվարի 1-ից եւ, համենայն դեպս, մինչեւ 2002 թ. վերջը սակագների նոր փոփոխություններ չեն լինի: Ինտերնետ կապի համար 1 րոպեն կարժենա 1 դրամ: 360 րոպե անվճար խոսելու հնարավորությունը տրվել է նաեւ իրավաբանական անձանց:

Տես » էջ 3



ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

# Հեյդար Ալիեւին Մոսկվայում դիմավորեց վարչապետ Կասյանովը

## Առաջին օրը՝ Պուտին-Ալիեւ ոչ պաշտոնական հանդիպում

2001 թ. ՌԴ նախագահ Վ. Պուտինն առաջին պաշտոնական արտասահմանյան այցը կատարեց Բաքու: 2002 թ. Ադրբեջանի նախագահն առաջին արտասահմանյան այցը կատարեց Մոսկվա: Երեկ Մոսկվա ժամանեց Հ. Ալիեւը. այցը պետական է, ինչն ինքնին ցույց է տալիս այն կարեւորությունը, որ Ռուսաստանը տալիս է Ադրբեջանի հետ հարաբերություններին, ավելի ճիշտ, դրանց բարելավմանը: Բորիս Ելցինի իշխանության տարիներին ռուս-ադրբեջանական հարաբերությունները «սառը պատերազմ» էին հիշեցնում: Ուշագրավ է, որ Հ. Ալիեւին «Վնուկովո» օդանավակայանում դիմավորեց ՌԴ վարչապետ Մ. Կասյանովը՝ պատվո պահակախմբի, նվագախմբի, հանդիսավոր շքերթի ուղեկցությամբ: Հենց օդանավակայանում ընդունելության ձեւից է երեւում, թե ինչպիսին է լինելու այցը: Երեկ տեղի ունեցավ Պուտին-Ալիեւ ոչ պաշտոնական հանդիպումը: Այսօր առավոտյան երկու պետությունների նախագահները դեմ առ դեմ կհանդիպեն, ապա նրանց կմիանան երկու պետությունների կառավարությունների անդամները: Ադրբեջանի նախագահը բանակցություններ կվարի վարչապետ Կասյանովի, արտգործնախարար Ի. Իվանովի, Մոսկվայի քաղաքագլուխ Յու. Լուժկովի հետ: Լոմոնոսովի անվ. համալսարանում Հ. Ալիեւին կտրվի պատվավոր դոկտորի կոչում:

Պետական այցի ընթացքում կստորագրվեն յոթ փաստաթղթեր, որոնց թվում՝ «Ադրբեջանի եւ Ռուսաստանի տնտեսական համագործակցության հետագա 10 տարիների զարգացման հիմնական սկզբունքների մասին», «Գաբալայի ՌՏԿ-ի վարձակալության կարգավիճակի եւ պահպանման պայմանների մասին»:

Պուտին-Ալիեւ առանձնազրույցի ընթացքում կքննարկվեն Կասպիցի իրավական կարգավիճակը, ԼՂ հակամարտության կարգավորման հեռանկարները, այլ հրատապ խնդիրներ:



# «Վրացական զորքերը պետք է դուրս բերվեն Կոդորի կիրճից»

## Կոֆի Անանի զեկույցը

ՄՈՍԿՎԱ, 24 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը հայտարարում է, որ Կոդորի կիրճում վրացական զորքերի շարունակվող ներկայությունը եւ անորոշությունն ԱՊՀ խաղաղարար ուժերի մանդատի առնչությամբ լրջորեն բարդացնում է իրադրությունը վրաց-աբխազական հակամարտության գոտում: Ինչպես հաղորդում են ռուսական լրատվամիջոցները, այս եզրակացությունն է պարունակում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված Աբխազիայի իրադրությանը նվիրված Կոֆի Անանի զեկույցը: Կոֆի Անանի կարծիքով, վրացական կողմին անհրաժեշտ է ըստ կարելվույն շուտ դուրս բերել իր ստորաբաժանումները Կոդորի կիրճից, ինչպես նաեւ շտապ կարգով որոշում ընդունել ԱՊՀ խաղաղարար ուժերի մանդատի երկարացման մասին: Միաժամանակ, «առաջընթաց էական քայլ» է համարել Կոֆի Անանը Թբիլիսիի եւ Սուխումի միջեւ լիազորությունների սահմանազատման վերաբերյալ փաստաթղթի պատրաստման աշխատանքների ավարտը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի Վրաստանի գծով հատուկ ներկայացուցչի եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի բարեկամների խմբի անդամների կողմից: Միեւնույն ժամանակ պահպանվող առարկությունները այդ փաստաթղթի առանձին դրույթների դեմ լրջորեն բարդացնում են հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը, նշվում է զեկույցում: Այդ կապակցությամբ Կոֆի Անանը վրաց եւ աբխազ ղեկավարներին հիշեցրել է, որ իրենց անհրաժեշտ է օգտվել ստեղծված հնարավորությունից եւ սկսել բանակցությունների գործընթացը, որոնց շրջանակում կողմերն իրենք են մշակելու իրենց միջեւ գոյություն ունեցող հակասությունների լուծման տարբերակը:

# Թեհրանը սպասում է Ալիեւին

ԲԱՔՈՒ, 24 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Իրանի ՆԳՆ ղեկավարի առաջին այցը Ադրբեջան վկայում է Բաքվի եւ Թեհրանի միջեւ կապերի զարգացման մասին», հունվարի 23-ին ԻԻՀ ներքին գործերի նախարար Աբդոլվահեդ Մուսավի-Լարիի գլխավորած ԻԻՀ պատվիրակության հետ հանդիպմանը հայտարարել է Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը: Ինչպես նշել է Ալիեւը, երկուստեք հետաքրքրող հարցերի վերաբերյալ կարծիքների լայն քննարկումը ենթադրում է համատեղ աշխատանք այդ ուղղություններով:

Նախարար Լարին Ալիեւին է փոխանցել նախագահ Խաթամիի բարեկամական ուղերձը: Նա հայտնել է, թե Թեհրանը սպասում է Ալիեւի պաշտոնական այցին, որը կկայանա փետրվարի երկրորդ տասնօրյակում: Ըստ Իրանի ռադիոյի, Լարին շեշտել է, որ Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացումը Իրանի արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է: Նա կարեւորել է նաեւ իրանցի եւ ադրբեջանցի պաշտոնյաների փոխայցերը երկկողմ շահերի ապահովման առումով:

# Պապը աղոթում է խաղաղության համար

Հռոմի պապ Հովհաննես Պողոսը երեկ պապամոբիլով Վատիկանից շարժվել է դեպի Իտալիայի Ասիսի քաղաք՝ սուրբ Ֆրանչեսկոյի ծննդավայրը, պատարագ մատուցելու աշխարհի խաղաղության համար: Նրան ուղեկցել են աշխարհի տարբեր կրոնների ներկայացուցիչները: Երթն ուղեկցվել է հրավառություններով: Ավելի քան 300 հոգեւոր հայրեր են մասնակցել Հռոմի պապի աղոթքին: Նրանք հավաքվել են Սուրբ Ֆրանչեսկոյի գերեզմանից քիչ հեռու տեղադրված մեծ վրանում: Պապի ելույթից հետո հնչել են բոլոր կրոնների ներկայացուցիչների աղոթքները՝ կրոնի արարողակարգի համաձայն: Մալթայից ժամանած հոգեւոր հայր Թոմաս Կալիհան ասել է. «Նյու Յորքի ահաբեկչություններից հետո ոմանք ասում էին, որ պատերազմ է սկսվել իսլամի դեմ: Բայց Հռոմի պապն այսօր ցանկանում է աշխարհին ցույց տալ, որ իսլամի եւ մյուս կրոնների միջեւ որեւէ խնդիր գոյություն չունի»: Այսուհանդերձ, ոչ բոլորն են գոհունակություն արտահայտել Հռոմի պապի նախաձեռնությունից: Իտալացի երկու կարդինալներ այն կարծիքն են հայտնել, որ աբեղաների, ռաբբիների եւ մոլլաների հետ աղոթելը խառնաշփոթություն էր առաջացրել կաթոլիկ եկեղեցու հավատացյալների շրջանում:

Ռ. Պ.

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Հիմնականն ամերիկյան օժանդակության արդյունավետ բաշխման հարցն էր

Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովը երեկ ավարտեց երկօրյա աշխատանքը, որից հետո հանձնաժողովի համանախագահներ՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը եւ Եվրոպայի ու Եվրասիայի ԱՄՆ օժանդակության համակարգող դեսպան Ուիլյամ Թեյլորը կարճատեւ հանդիպում ունեցան լրագրողների հետ եւ բավականին ժլատ տեղեկություններ հաղորդեցին քննարկումների մասին:

Երկու ելույթ ունեցողները մի զգալի ժամանակահատված ողջունեցին եւ շնորհակալություն հայտնեցին միմյանց, այնուհետեւ խոսեցին արդյունավետ աշխատանքի, դրա ուղղությունների, Հայաստանին հատկացված ամերիկյան օգնության արդյունավետ ծախսման անհրաժեշտության մասին: Կոնգրեսի տրամադրած 90 մլն դոլարը եւ ընդհանրապես Հայաստանում իրագործվող մյուս ծրագրերը, ըստ Վարդան Խաչատրյանի, պետք է ներդաշնակեն աղքատության նվազեցման ծրագրին: Նախարարն ընդգծեց, որ չնայած 9 տոկոս տնտեսական աճին, ստացվող արդյունքը համաչափ չի բաշխվում: Պետք է անել անհրաժեշտը, որպեսզի բեւեռացումը մեղմվի եւ տնտեսական աճը նեղ շրջանակներին չընդգրկի:

Տես » էջ 2



